06.11.2023 թվականի դրությամբ, «Էսգեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Աննարկա» ՍՊԸ-ն փոխկապակցված անձինք են, մասնավորապես, որ երկու ընկերությունների իրական շահառուն հանդիսանում է Երեմ Սարգսյանը,..., ապա սույն դեպքում, Պատասխանողի կողմից ներկայացվել են ապացույցներ կայացված որոշումների հիմքում ընկած հանգամանքները հաստատելու կապակցությամբ:

Դատարանը գնահատելով գործում եղած ապացույցները, ղեկավարվելով ներքին համոզմամբ, գտնում է, որ հայցապահանջը ենթակա է մերժման:

6.Դատական ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101- Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումարը:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, հետևաբար պետական տուրքի հարցը համարվում է լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Էսգեթ Ֆարմ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ Պաշտպանության նախարարության և «ԷՍԳԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 17.06.2024թ.-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 պայմանագիրը 20.08.2024թ.-ին ՀՀ Պաշտպանության նախարաության կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «ԷՍԳԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 30.08.2024թ.-ի թիվ 142 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am